Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 21-ի N 595 - Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա ՆՆ Ե Ր

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պետական սեփականություն հանդիսացող պետական գույքը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում են, եթե ներկայացրած գործարար ծրագիրը բավարարում է N 2 օրինակելի ձևով ներկայացված պահանջներին և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ոլորտային զարգացման ռազմավարական փաստաթղթերում ամրագրված՝ ըստ ոլորտների զարգացման քաղաքականության պահանջներին, ինչպես նաև հետևյալ պայմանների բավարարման դեպքում.

1) հանդես թողարկող՝ զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող լրատվության միջոցը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 6 աշխատակից,

բ. դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության և/կամ համապատասխան հրատարակչության հաշիվ-ապրանքագրի համաձայն, պետք է հրատարակած լինի նախորդ երկու տարիներին և թողարկած լինի տարեկան նվազագույնը վեց համար (յուրաքանչյուր համարը՝ առնվազն 1,5 մամուլ ծավալով և 500 օրինակ տպաքանակով).

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող ամսաթերթ (պարբերական մամուլ) թողարկողը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 5 աշխատակից,

բ. դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության և/կամ համապատասխան հրատարակչության հաշիվ-ապրանքագրի համաձայն, պետք է հրատարակած լինի նախորդ երեք տարիներին և թողարկած լինի տարեկան նվազագույնը տասներկու համար (յուրաքանչյուր համարը՝ առնվազն 1 մամուլ ծավալով և 1000 օրինակ տպաքանակով).

3) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող շաբաթաթերթ (պարբերական մամուլ) թողարկողը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 6 աշխատակից,

բ. դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության և/կամ համապատասխան հրատարակչության հաշիվ-ապրանքագրի համաձայն, պետք է հրատարակած լինի նախորդ երեք տարիներին և թողարկած լինի տարեկան նվազագույնը քառասունութ համար (յուրաքանչյուր համարը՝ առնվազն 1500 օրինակ տպաքանակով).

4) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող օրաթերթ (պարբերական մամուլ) թողարկողը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 7 աշխատակից,

բ. դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության և/կամ համապատասխան հրատարակչության հաշիվ-ապրանքագրի համաձայն, պետք է հրատարակած լինի նախորդ երեք տարիներին և թողարկած լինի տարեկան նվազագույնը 130 համար (յուրաքանչյուր համարը՝ առնվազն 1500 օրինակ տպաքանակով).

5) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող լրատվական գործակալությունը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 10 աշխատակից,

բ. դիմելու պահից առնվազն երեք տարի առաջ, համաձայն իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականի, պետք է գրանցված լինի որպես լրատվական գործակալություն և իր գործունեությունը ծավալի բացառապես իր կանոնադրությամբ ստանձնած լրատվություն իրականացնելու պարտավորություններին համապատասխան.

6) հանրային մուլտիպլեքսում տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝

ա. պետք է ունենա տեսալսողական մեդիա ոլորտի կարգավորող պետական մարմնի կողմից տրված Հեռարձակողի լիցենզիա,

բ. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն

սլոթի օգտագործման, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակող կազմակերպությունը պետք է ունենա նվազագույնը 50 հաստիքային աշխատակից,

մարզային (համայնքային) սլոթի օգտագործման, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակող կազմակերպությունը պետք է ունենա նվազագույնը 25 հաստիքային աշխատակից,

մայրաքաղաքային սլոթի օգտագործման, մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակող կազմակերպությունը պետք է ունենա նվազագույնը 35 հաստիքային աշխատակից,

7) լսողական ծրագրեր հեռարձակող օպերատորի գործունեություն իրականացնող իրավաբանական անձ հանդիսացող լսողական մեդիածառայություն մատուցող կազմակերպությունը՝

ա. պետք է ունենա լսողական մեդիածառայություն մատուցող՝ ոլորտի կարգավորող պետական մարմնի կողմից տրված Հեռարձակողի լիցենզիա,

բ. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն.

համապատասխան մրցույթում հաղթող ճանաչված լսողական մեդիածառայություն հեռարձակող կազմակերպությունը պետք է ունենա նվազագույնը 10 հաստիքային աշխատակից,

մարզային (համայնքային) լսողական մեդիածառայություն մրցույթում հաղթող ճանաչված հեռարձակող կազմակերպությունը պետք է ունենա նվազագույնը 5 հաստիքային աշխատակից,

մայրաքաղաքային մրցույթում հաղթող ճանաչված լսողական մեդիածառայություն հեռարձակող կազմակերպությունն ունենա նվազագույնը 7 հաստիքային աշխատակից.

8) էլեկտրոնային եղանակով լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող լրատվության միջոցը՝

ա. վերջին երեք տարիների ընթացքում, Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետք է ունենա նվազագույնը հաստիքային 6 աշխատակից,

բ. դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրի կողմից տրված տեղեկատվության և/կամ համապատասխան հրատարակչության հաշիվ-ապրանքագրի համաձայն, պետք է հրատարակած լինի նախորդ երեք տարիներին և թողարկած լինի տարեկան առնվազն 150 էլեկտրոնային հրապարակում:

2. Սույն կարգի 1-ին կետով սահմանված պայմանները բավարարող լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց տարածքը (առկայության դեպքում) անհատույց օգտագործման տրամադրվում է, եթե դիմելու պահին և դրան նախորդող 3 տարիների ընթացքում Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքի համաձայն չեն ունեցել սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք: Ընդ որում, նշված պայմանները բավարարող յուրաքանչյուր լրատվական միջոցի մեկ աշխատակցին հատկացվում է մինչև 6 քմ մակերեսով տարածք և լրացուցիչ մինչև 20 քմ տարածք՝ այցելուների, արտահաստիքային աշխատակիցների (թղթակից) համար ելնելով սենյակների փաստացի չափերից:

3. Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին պայմանագրի կնքելուց հետո յուրաքանչյուր լրատվական միջոցը համապատասխանաբար պետք է պահպանի սույն կարգի 1-ին կետով սահմանված պահանջները և սեփականություն ձեռք բերելու դեպքում պայմանագիրը լուծելու մասին Կոմիտե ներկայացնի դիմում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N 2

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործող՝ լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ լրատվական միջոց) մասին՝

1.1. լրատվական միջոցի լրիվ անվանումը _____,

1.2. լրատվական միջոցի ձևը _____,

1.3. լրատվական միջոցի ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը _____,

1.4. լրատվական միջոցի գրանցման վկայականի համարը _____,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը _____,

1.6. գործունեության հիմնական ուղղությունները _____,

1.7. գործունեության իրականացման վայրը (նստավայրը)_____,

1.8. փոստային հասցեն_____,

1.9. տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե_____,

վեբ կայքեր _____,
(առկայության դեպքում)

1.10. լրատվական միջոցի գործունեության զարգացման (այդ թվում՝ նաև գույքի բարելավման, եթե նախատեսվում է) ծրագիրը,

1.11.լրատվական միջոցի ղեկավար՝_____, հեռ. _____, կազմակերպության հաշվապահական ծառայության ղեկավար _____, հեռ. _____:

2. Լրատվական միջոցի գործունեության համար հիմք հանդիսացող իրավական ակտերը և զարգացման ռազմավարական փաստաթղթերը (հաստատված ծրագրեր, ընդունված որոշումներ և այլն, եթե դրանք առկա են)

2.1. _____

(նշել կազմակերպության անվանումը)

իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, _____

(նշել կազմակերպության տվյալ տեսակին վերաբերող օրենքը)

օրենքով, «_____» կազմակերպության կանոնադրությամբ և այլ

իրավական ակտերով _____,

(նշել ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, համարը և տեսակը)

2.2. _____

(նշել կազմակերպության անվանումը)

իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման համար առաջնորդվում է՝ ծրագրով_____,

(նշել ծրագրի անվանումը)

_____

(նշել որոշման (փաստաթղթերի) անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական համարը և տեսակը)

որոշմամբ (փաստաթղթերով),

2.3 _____

(նշել լրատվական միջոցի անվանումը)

աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և այդ ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:

3. Ծրագրի իրականացման համար առկա մարդկային ռեսուրսներն են

3.1. _____,

(ծրագրի ղեկավար կազմի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

3.2. _____,

(ծրագրի իրականացման համար կազմակերպության մշտական և ներգրավված աշխատողների անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, մասնագիտություն)

3.3._____:

(տեղեկատվություն ծրագրին մասնակցող այլ անձանց մասին)

4. Կազմակերպության կողմից տարածքի օգտագործման ծրագրի նպատակը և խնդիրները

4.1 սույն ծրագրի իրականացման նպատակը հանդիսանում է՝

1) _____,

2) _____,

(եթե ծրագրի իրականացման նպատակը կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված և գործող ոլորտի կամ տարածքի սոցիալտնտեսական զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների հետ, ապա անհրաժեշտ է նշել որոշման անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական համարը և տեսակը)

4.2. սույն ծրագրի իրականացման ընթացքում լուծման ենթակա խնդիրներ են՝

1) _____,

2) _____,

3) _____ և այլն:

5. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները

5.1. Սույն ծրագրի իրականացման համար առաջիկա _____ տարիների համար լրատվական միջոցի կողմից իրականացվող ծրագրի ֆինանսավորման ընդհանուր մեծությունը կազմում է _____ ՀՀ դրամ, այդ թվում՝ ըստ ծրագրի իրականացման

(նշել չափը)

տարիների,

2.2. սույն ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են.

1) լրատվական միջոցի միջոցները _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

2) լրատվական միջոցի կողմից փոխառու միջոցները _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

3) դրամաշնորհներ _____,

(նշել չափը և տրամադրումը ըստ տարիների)

4) բարեգործների կողմից տրամադրվող միջոցները _____

_____,

(նշել կազմակերպության կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանունը և ֆինանսավորման չափը ըստ տարիների)

5) այլ աղբյուրներ _____:

6. Ծրագրի իրականացման և տարածքի օգտագործման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել _____ տարիների ընթացքում:

7. Ծրագրի իրականացման համար նախատեսվող միջոցառումները

7.1. սույն ծրագրի շրջանակներում առաջիկա _____ տարիներին _____ լրատվական միջոցը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները (այդ թվում՝ տարածքի բարելավման ուղղությամբ, եթե ծրագրով նախատեսվում է)

_____,
(նշել միջոցառումների անվանումը ըստ ծրագրի իրականացման տարիների)

_____,

7.2. սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է, որ լրատվական միջոցը կապահովի

_____,
(նշել ծրագրի չափելի արդյունքները թվային ցուցանիշներով, շահառուների թիվը, մյուս անհրաժեշտ տեղեկությունները)

_____,

7.3. ծրագրի իրականացման ընթացքում իրականացվող բաժանելի բարելավումները (ձեռք բերվող գույքը) չեն համարվում տարածքի բարելավմանն ուղղված միջոցներ և համարվում են լրատվական միջոցի սեփականությունը:

8. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքը

սույն ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ լրատվական միջոցը ծրագրային ժամանակահատվածում (հնարավորության դեպքում՝ ըստ տարիների) կապահովի _____

_____,
(նշել ծրագրի չափի արդյունքները, մասնավորապես՝ կատարված աշխատանքները և ստեղծված արդյունքները՝ գիտական աշխատանքների սեմինարների հրապարակում, դասընթացների և խորհրդակցությունների անցկացում, բարեգործական և գիտակրթական միջոցառումների շահառուների թիվը, տարածքի բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքների պատկերային վերջնարդյունքները և ծախսերը ու ծրագրի վերջնական արդյունքներին առնչվող այլ տեղեկությունները)

_____:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

25.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ